



ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒՎ ԱՌԱՋԱՐԿ Է ՆԵՐԿԱՅԱՅՐԵԼ

02.02.2017



Հայէկոնոմբանկը փաթեթային առաջարկ է ներկայացրել՝ մշակված հատուկ ՀՀ պաշտպանության նախարարության և ենթակա զորամասերի զինծառայողների, քաղաքացիական հատուկ ծառայողների և բանվոր ծառայողների համար:

«Փաթեթի շրջանակում բանկն առաջարկում է արտոնյալ


պայմաններով ծառայություններ՝ պլաստիկ քարտեր, ավանդներ և վարկային գծեր», - ասված է հաղորդագրությունում:

Բանկում նշել են, որ ստանալով աշխատավարձը Հայէկոնոմբանկի պլաստիկ քարտերով՝ ՀՀ պաշտպանության նախարարության և ենթակա զորամասերի զինծառայողները, քաղաքացիական հատուկ ծառայողները և բանվոր ծառայողները կստանան հնարավորություն՝ օգտվելու արտոնյալ պայմաններից: Հայէկոնոմբանկում վստահեցրել են, որ «մշտապես ուշադրության կենտրոնում են պահելու վերոնշյալ ոլորտը և լինելու են զինծառայողների կողքին»:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՄԻՋՈՑՈՎ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՎԻՋԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՌՑԱՆՑ ԽԱՂ

03.02.2017



Համակարգչային խաղերի, մասնավորապես՝ ֆուտբոլի սիրահարներին, առաջարկվում է հաճելին համատեղել օգտակարի հետ: Բնակչության ֆինանսական գրագիտությունը խթանելու նպատակով այսօրվանից գործարկվում է «Ֆինանսական ֆուտբոլ» խաղը, որը հասանելի կլինի www.abcfinance.am կամ www.financialfootball.am հասցեներով:

«Վիզա» միջազգային կազմակերպությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ ներկայացրեց «Ֆինանսական ֆուտբոլ» ինտերակտիվ առցանց խաղի հայկական տարբերակը, որը կօգնի աշակերտներին, ուսանողներին և ավելի բարձր տարիքի անձանց զարգացնել իրենց ֆինանսական գիտելիքները: Խաղն առաջարկում է հարցեր, որոնց ճիշտ պատասխանների դեպքում դուք կարող եք հաղթել հակառակորդ թիմին՝ գուլերի

հաշվարկով:

Հարցերն առնչվում են բյուջեի կառավարմանը՝ խնայողություններ, ներդրումներ, վարկավորում և այլն:

Խաղն ունի երկու տարբերակ՝ անհատական խաղացողի և երկկողմանի օնլայն խաղի համար: Այն կարող են խաղալ բոլոր ցանկացողներն առանց տարիքային սահմանափակման, քանի «Ֆինանսական ֆուտբոլ»-ն ունի բարդության երեք մակարդակ՝ 11-14, 15-18 և 18-ից բարձր տարիքային խմբերի համար:

ԿԲ սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի ղեկավար Արմենուհի Մկրտչյանն ասաց, որ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունն իրենց ուղեցույցներից է:

«Խաղի միջոցով համատեղվում է կրթությունն ու զվարճանքը: Ֆուտբոլի խաղը համատեղելով ֆինանսական կրթման գործընթացին՝ մենք կստանանք անձնական ֆինանսներին վերաբերող գիտելիքների ընդլայնում: Ընտրելով բարդության մակարդակը՝ կարելի է ամեն անգամ խորացնել գիտելիքները: Միայն պատասխանելու դեպքում միավոր չեն ստանում, բայց իրենց հարցի ճիշտ պատասխանն է երևում էկրանին, այսինքն՝ սովորում է», - նշեց Մկրտչյանը:

Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում «Վիզայի» ներկայացուցիչ Դմիտրի Կրեպակն էլ ասաց, որ իր կարծիքով՝ խաղը հետաքրքիր կլինի թե փոքրերին, թե մեծերին:

«Ինֆորմացիան մարդկանց համար ավելի հեշտ հասանելի է դառնում, երբ խաղի բաղադրիչ կա: Կրթության դասական մեթոդները, գրքերը, կարծես, ժամանակակից աշխարհում իրենց փոքր-ինչ սպառել են: Ուստի առաջարկվող ինտերակտիվ տարբերակը կօգնի ավելի հեշտ սովորել ֆինանսական ոլորտին առնչվող առանցքային գիտելիքները: Բոլորն էլ կուզեն խաղալ, գոլ խփել, այնպես որ հույս ունեմ, որ հայերը կհավանեն այս խաղը», - մասնավորեցրեց նա:



ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է VISA VIRTUAL ACCOUNT ՔԱՐՏԸ

03.02.2017



Կոնվերս Բանկն առցանց գնումներ նախընտրող իր հաճախորդների համար գործարկել է նոր սերնդի VISA վիրտուալ քարտ՝ Visa Virtual Account:

Բանկում նշել են, որ Visa Virtual Account-ը հնարավորություն է տալիս կատարել անվտանգ առցանց գնումներ և վճարումներ՝ խուսափելով

պլաստիկ քարտերին առնչվող ռիսկերից, ինչպես նաև գնորդին ազատելով պլաստիկ բանկային քարտ ունենալու անհրաժեշտությունից:

«Visa Virtual Account-ը նախընտրողներին ֆիզիկական քարտի փոխարեն տրվում է առցանց հաշիվ և քարտային տվյալներ, որոնց մուտքագրմամբ կարելի է կատարել առցանց վճարումներ ինտերնետ խանութներում: Քարտն ունի օրական օգտագործման սահմանաչափ, որը հաճախորդը հնարավորություն ունի փոփոխել՝ նվազեցնելով ռիսկերը: Այն ապահով է, դեբետային, հեշտ կառավարվող և մատչելի՝ երեք տարվա սպասարկման վճարը ընդամենը 1000 ՀՀ դրամ է», - նշել են բանկում:



ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՆԱՍԴԱՔ ԱՐՄԵՆԻԱ»-Ի 2016Թ. ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

03.02.2017



Փետրվարի 3-ին հայտարարվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի լավագույն անդամ 2016» մրցանակաբաշխության հաղթողները:

Ինչպես հայտնել են բորսայում, մրցանակաբաշխությունն անցկացվում է 7-րդ տարին անընդմեջ, որի շրջանակում պարգևատրվում են բորսայի և դեպոզիտարիայի դրսևորած անդամները:

առավելագույն

ակտիվություն

դրսևորած

անդամները:

«Բորսայի լավագույն անդամ կորպորատիվ արժեթղթերի շուկայում» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Արմենբրոկ» ընկերությունը: Լավագույնների եռյակում էին նաև «Ռենեսա»-ն և Արմսվիսթանկը:

«Բորսայի լավագույն անդամ պետական պարտատոմսերի շուկայում» անվանակարգում հաղթող է դարձել Արարատբանկը:

«Բորսայի լավագույն անդամ արտարժույթի շուկայում» անվանակարգում հաղթող է ճանաչվել Անելիք Բանկը:

«Բորսայի լավագույն անդամ ռեպո և սվոպ գործառնությունների անվանակարգում» հաղթող է դարձել Կոնվերս Բանկը:

«Բորսայի լավագույն անդամ» գերանվանակարգում հաղթող է ճանաչվել ՎՏԲ-Հայաստան Բանկը:

Անցկացված փակ քվեարկության արդյունքում «Լավագույն գործընկեր առևտրի մասնակից» անվանակարգում հաղթող է ճանաչվել Կոնվերս Բանկի առևտրի մասնակից Հասմիկ Մաթևոսյանը:

«Դեպոզիտար համակարգի լավագույն հաշվի օպերատոր-պահառու օտարերկրյա արժեթղթերի շուկայում» անվանակարգում այս տարի հաղթող է դարձել Ամերիաբանկը:

«Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի լավագույն աշխատակից» անվանակարգում հաղթող է դարձել Յուսիբանկի աշխատակից Ռուզաննա Աբրահամյանը:

ՀԱՐՑՈՒՄ. ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ԿՐԿԻՆ ԱՌԱՋԻՆ Է ԲԲԵՆԴԻ ՃԱՆԱՉԵԼԻՈՒԹՅԱՄԲ

09.02.2017



IPM Research հանրային կարծիքի և մարքեթինգի ուսումնասիրման ինստիտուտի անցկացրած հետազոտության արդյունքներով՝ ՎՏԲ-Հայաստան Բանկը շարունակում է մնալ Հայաստանի ամենաճանաչելի բանկը:

Ինչպես հայտնել են բանկում, 2016թ. դեկտեմբերին Երևանի և Հայաստանի մյուս քաղաքների 18-55 տարեկան 1200 բնակիչների շրջանում անցկացվել է «Տեղական շուկայում ՎՏԲ բրենդի ճանաչելիություն» հետազոտությունը:

«Հետազոտության արդյունքում պարզվել է, որ Հայաստանում Top of Mind (առաջին հանպատրաստից նշում) ցուցանիշով ՎՏԲ-Հայաստան Բանկը զբաղեցնում է 1-ին տեղը: ՎՏԲ-Հայաստան Բանկի Top of Mind ցուցանիշը գրանցում է կայուն աճ, և այս տարի գրանցվել է ցուցանիշի ամենաբարձր մակարդակը՝ նախորդ արդյունքների համեմատ», - ասված է հաղորդագրությունում:

Բացի Top of Mind ցուցանիշից, որոշվել է բանկի ընդհանուր հանպատրաստից իմացության, հուշմամբ իմացության մակարդակը և MA Index-ը: Վերջինս բնորոշում է բանկի դիրքը, որն նա զբաղեցնում է սպառողի գիտակցության մեջ ի թիվս այլ բանկերի: Ըստ հետազոտության՝ ՎՏԲ-Հայաստան Բանկը պահպանել է առաջատարի դիրքը բոլոր հիմնական ցուցանիշներով:

ՎՏԲ-Հայաստան Բանկը զբաղեցրել է առաջատարի դիրքը նաև հուսալիության բոլոր հիշատակումներով: Բացի այդ, գրանցվել է բանկի նկատմամբ վստահության ցուցանիշի մինչև 31% աճ:

16.02.2017



Հայաստանի փոքր բանկային հատվածը ցանկանում է հետևել հարևան Վրաստանի օրինակին՝ դառնալով զարգացած երկրների ներդրողների «սիրելին», գրում է բրիտանական IntelliNews գործակալությունը:

«Այն բանից հետո, երբ 2016-ին Ամերիաբանկը հայտարարեց Լոնդոնում բաժնետոմսերի առաջնային հանրային տեղաբաշխում (IPO) իրականացնելու մասին, բոլորն ուշի-ուշով հետևում են նրա գործունեությանը», - նշում է IntelliNews-ը:

Գործակալության հետ զրույցում Ամերիաբանկի գլխավոր տնօրենի տեղակալ և ֆինանսական տնօրեն Գևորգ Թառումյանն ասել է, որ Ամերիաբանկի՝ Լոնդոնում IPO իրականացնելու գործընթացը 1-2 տարի կպահանջի:

Նրա խոսքով՝ Ամերիաբանկը կմիանա Վրաստանի TBC Bank-ին և Bank of Georgia-ին՝ որպես տարածաշրջանի երրորդ վարկատու, որպեսզի արագացնի Լոնդոնի բորսայում ցուցակման գործընթացը:

«Մեր աճի «ծարավը» դեռևս չի մարել: Առաջիկա երեք տարիների համար բավական ամբիցիոզ ծրագրեր ունենք», - ասել է Գևորգ Թառումյանը՝ նշելով, որ բանկն այս տարի նախատեսում է հասցնել ակտիվների ծավալը \$1,5 մլրդ-ի՝ լինելով առաջատարը ինչպես ակտիվների, ընդհանուր և կորպորատիվ վարկավորման ծավալներով, այնպես էլ ավանդների ներգրավման ցուցանիշով:

Անդրադառնալով հարցին, թե արդյոք բանկը մտադիր է մասնակցել ՀՀ բանկային համակարգում ընթացող միավորումներին, բանկի փոխտնօրենը նշել է, որ մինչ այս իրենք հետևել են գործընթացին՝ դեռևս մնալով ձեռնպահ:

«Ամերիաբանկը ներկայում գնահատում է ձեռքբերումներ կատարելու հնարավորությունները՝ ավելի քիչ դիտարկելով միաձուլման տարբերակը, ինչպես նաև ուսումնասիրում ներդրումային բանկերի կողմից տրամադրվող ձեռքբերման ֆինանսավորման հնարավորությունները: Այս գործընթացը միայն ժամանակի հարց է», - ընդգծել է նա:

Գևորգ Թառումյանի խոսքով՝ միաձուլման և կլանման նոր գործարքներ սպասվում են նաև 2017-ին:

«Քանի որ բանկային հատվածը տեխնոլոգիական արդիականացման եզրին է, փոքր վարկատուները կկորցնեն իրենց մրցակցային առավելությունները, անգամ եթե բավարարեն ԿԲ նոր պահանջին», - նշել է նա:

Հիշեցնենք, որ Ամերիաբանկը վերջերս Լոնդոնում նշանակել էր լիազոր ներկայացուցիչ:



**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ CERTIFICATION INTERNATIONAL-Ի ԿՈՂՄԻՑ
ՀԱՎԱՍՏԱԳԻՐ Է ՍՏԱՑԵԼ**

16.02.2017



Հայէկոնոմբանկը բրիտանական Certification International կազմակերպության կողմից արժանացել է Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի՝ միջազգային ստանդարտներին համապատասխանության հավաստագրի:

«Բանկի ղեկավարությունը, կարևորելով տեղեկատվական անվտանգության համակարգի զարգացման գործընթացը, մշտապես ցուցաբերում է մեծ ուշադրություն և աջակցություն», - ասված է հաղորդագրությունում:



**ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ՀԻՓՈԹԵՔ ԿՍՏԱՆԱՆ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻՑ»
ԱՆՆԱԽԱԴԵՊ ՑԱԾԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՑՔՈՎ**

21.02.2017

«Արարատբանկը» աննախադեպ ցածր տոկոսադրույքով հիփոթեք կտրամադրի «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» սոցիալական ծրագրի

շահառուներին, - ասաց «Արարատքանկ» ԲԲԸ-ի գործադիր տնօրեն, վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը:



«Մենք կարևորում ենք այս ծրագիրը, քանի որ այնտեղ բացի բիզնես բաղադրիչից, կա նաև սոցիալական պատասխանատվության բաղադրիչ: Մենք հնարավորություն ենք տալիս երիտասարդ մասնագետներին ձեռք բերել բնակարան մատչելի գնով, իսկ Երևանում հայտնվում է նոր բնակելի թաղամաս, որը համապատասխանում

է միջազգային չափանիշներին», - ասաց Օսիպյանը «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրի համակարգող, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Արսեն Քարամյանի հետ համագործակցության հուշագրի ստորագրման ժամանակ:

Օսիպյանի խոսքով, ծրագրի շահառուները կկարողանան հիփոթեք ստանալ ՀՀ դրամով տարեկան 7,95% տոկոսադրույքով, 10–20 տարի մարման ժամկետով, 10–20% կանխավճարի դեպքում:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» նախագծի հետ մենք արդեն համագործակցում ենք 4 ծրագրերի շրջանակում: Նախորդ երեք ծրագրերով «Արարատքանկը» տրամադրել է վարկեր 334 ընտանիքների 4,4 մլրդ դրամ ընդհանուր ծավալով», - ավելացրեց Օսիպյանը:

Քարամյանն իր հերթին նշեց, որ «Արարատքանկի» կողմից առաջարկվող տոկոսադրույքը ամենացածրն է ծրագրի իրականացման ողջ ժամանակաշրջանի ընթացքում:

«Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 6 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել «Ավան 6» համալիրը Ծարավ Աղբյուրի 55/3 հասցեով: Շինարարական աշխատանքները մեկնարկել են նախորդ տարվա նոյեմբերի կեսին: Նախատեսվում է դրանք ավարտել 2018 թ.-ին», - ասաց Քարամյանն ու ավելացրեց, որ բնակարանները վիճակահանության միջոցով արդեն հատկացվել են շահառուներին:



ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ՆԵՐԴՐԵԼ Է ՕՆԼԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ 3D-SECURE ՀԱՄԱԿԱՐԳԸ

22.02.2017



ՎՏԲ-Հայաստան Բանկն իր Visa քարտապանների համար գործարկել է ինտերնետ գնումների ծառայություն՝ պաշտպանված անվտանգության 3D-Secure համակարգով:

Ինչպես հայտնել են բանկում, համակարգը հնարավորություն է տալիս գնման պահին նույնականացնել քարտապանին մեկանգամյա

օգտագործման գաղտնագրի մուտքագրման միջոցով, որը բանկն ուղարկում է քարտապանին SMS հաղորդագրության տեսքով՝ հենց գնման պահին:

3D-Secure ծառայությունը, ըստ բանկի, քարտապանին տալիս է հետևյալ առավելությունները

- Անվտանգություն. ինտերնետ-գնումը հաստատվում է մեկանգամյա օգտագործման գաղտնաբառով, որը հասանելի է միայն կոնկրետ քարտապանին (գաղտնաբառն ուղարկվում է քարտապանի բջջային հեռախոսահամարին՝ SMS հաղորդագրության միջոցով) և վավեր է միայն մեկ գնման համար:

- Պարզություն և հարմարավետություն. վճարում կատարելու համար հաճախորդն առցանց վճարման էջում մուտքագրում է SMS հաղորդագրության միջոցով իր բջջային ստացված վեցանիշ թիվը:

«3D-Secure համակարգի կիրառմամբ ինտերնետ գնումներ կատարելու համար անհրաժեշտ է օգտվել 3D-Secure հավատարմագրում ունեցող ինտերնետ խանութներից, այլապես վճարումը կկատարվի առանց մեկանգամյա գաղտնաբառով քարտապանի նույնականացման: Անգամ այդ դեպքում բանկի VISA քարտապաններն ապահովված կլինեն անվտանգության լրացուցիչ միջոցով, որը խարդախությունների հավանականությունը հավասարեցնում է զրոյի», - ասված է հաղորդագրությունում:



ԱԿԲԱ-ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈՂ ԲԱՆԿԻ ԲԻԶՆԵՍ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ

22.02.2017



Ակբա-Կրեղիտ Ագրիկոլ Բանկը ՓՄՁ ներկայացուցիչների համար նախատեսված անվճար բիզնես դասընթացների շարքը հասանելի է դարձրել նաև ՀՀ մարզերին:

Ինչպես հայտնել են բանկում, փետրվարի 21-ին և 22-ին Էջմիածին քաղաքում անցկացվել են դասընթացներ «Շրջանառու կապիտալի ավելացում», «Բիզնես

ցիկլերի և ապրանքանյութական պաշարների կառավարում» թեմաներով:

Դասընթացներին մասնակցել է Արմավիրի մարզի ՓՄՁ-ների շուրջ 30 ներկայացուցիչ:

«2013-ին Ակբա-Կրեղիտ Ագրիկոլ Բանկն առաջինն էր ՀՀ-ում, որ հանդես եկավ նմանատիպ նախաձեռնությամբ, իսկ 2015-ից դասընթացները հասանելի դարձան նաև բանկի հաճախորդ չհանդիսացող ձեռնարկությունների ղեկավարներին: Այժմ մենք այս նախաձեռնությունը տեղափոխում ենք մարզեր՝ կարևորելով համագործակցությունը Հայաստանի բոլոր համայնքների բիզնես ոլորտների ներկայացուցիչների հետ: Սա է սոցիալապես պատասխանատու բիզնեսը», - նշել է բանկի Զարգացման վարչության պետ Արսեն Մելքոնյանը:

Մինչ օրս բանկը կազմակերպել է 43 դասընթաց, որոնց մասնակցել է ավելի քան 500 ՓՄՁ ներկայացուցիչ՝ շուրջ 300 կազմակերպությունից:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2017Թ. «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ»

27.02.2017



Ամերիաբանկը “Global Finance” հեղինակավոր ամսագրի կողմից արժանացել է Հայաստանի «Լավագույն ներդրումային բանկ 2017» մրցանակին: Ամսագրի խմբագիրների կողմից հաղթողները որոշվել են մի շարք չափանիշներով, որոնցում ներկայացված են շուկայի մասնաբաժինը, գործարքների քանակը և ծավալը, սպասարկման որակը, մատուցվող խորհրդատվությունը, գործարքների կառուցվածքը, նորարարությունը, գնագոյացումը և այլն:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՊՐՈՄԵԹԵՑ ԲԱՆԿԻ՝ ԱՐԾԱԹԱԳՈՐԾՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

02.03.2017



Պրոմեթեյ Բանկի գլխամասային գրասենյակում այսօր ամփոփվել են փետրվարի սկզբին կազմակերպված արձաթագործների մրցույթի արդյունքները:

Ինչպես հայտնել են բանկում, 1-ին հորիզոնականը զբաղեցրել է Մեյրան Հարությունյանը (300 հազ. դրամ պարգև), 2-րդ հորիզոնականը՝ Գոգո Չափրազյանը (150 հազ. դրամ), իսկ 3-րդ հորիզոնականը՝ Հայկ Գալստյանը (50 հազ. դրամ):

Հատուկ մրցանակի է արժանացել Հայկ Մկրտչյանը, որին շնորհվել է նվեր՝ «Ուրբաթագիրք»:

Մրցույթի հաղթողներին հավաստագրեր շնորհել է Պրոմեթեյ Բանկի Վարչության նախագահ Էմիլ Սողոմոնյանը, իսկ գումարային պարգևը տրամադրվել է բանկի թողարկած ArCa քարտերի միջոցով:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՏՈՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԿՑԻԱՆԵՐ Է ԳՈՐԾԱՐԿԵԼ

03.03.2017



Կոնվերս Բանկը գործարկել է «Ծաղիկներ և ավելին» քարտային երկու ակցիա՝ նվիրված գարնանային տոներին՝ մարտի 8-ին և ապրիլի 7-ին:

Ինչպես նշել են բանկում, առաջին ակցիայի շրջանակում բանկը հաճախորդներին առաջարկում է մարտի 7-ից ապրիլի 7-ը ստանալ Woman's քարտեր, որոնց

սպասարկումն առաջին տարվա համար անվճար է, իսկ հաջորդող տարիների համար կգործի 50% զեղչ:

Woman's քարտապանները հնարավորություն կունենան ստանալ նաև վարկային սահմանաչափ՝ առավելագույնը 1 մլն դրամի չափով և մինչև 30 ամիս մարման ժամկետով:

«Woman's քարտերն իրենց տեսակով եզակի են Հայաստանում: Դրանք մշակվել և գործարկվել են հատուկ կանանց համար՝ հաշվի առնելով նրանց նախասիրությունները: Այս քարտապանների համար պարբերաբար կազմակերպում ենք տարբեր զեղչային, գումարի հետվերադարձի ակցիաներ ինչպես բանկի գործընկեր հագուստի, օժանելիքի բրենդային խանութներում, ռեստորաններում, այնպես էլ զեղեցկության սրահներում, մարզասրահներում», - ասված է հաղորդագրությունում:

Բացի այդ, երկրորդ ակցիայի շրջանակում մարտի 8-ից ապրիլի 7-ը բանկը պարբերաբար կիրականացնի լոյալության ծրագրեր իր քարտապանների համար՝ նրանց հնարավորություն տալով ցանկացած քարտով անկանխիկ գնումների համար ստանալ գործարքի գնի 20%-ի չափով հետ վերադարձ:



ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԸ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԵՏ

03.03.2017



Վայք քաղաքում կայացել է Հայբիզնեսբանկի, Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի և Վայոց Ձորի համայնքների ներկայացուցիչների հանդիպումը՝ «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» ծրագրի շրջանակում:

Բանկում նշել են, որ ծրագրի նպատակը կովկասյան էկոտարածաշրջանում բնության հատուկ պահպանվող տարածքների, արոտավայրերի, վայրի կենդանիների ապրելավայրերի ու անտառի կայուն կառավարումն է, ինչպես նաև էկո, ագրո և գինու զբոսաշրջության քաջալերումը:

Ծրագրի նախաձեռնողների կողմից Հայբիզնեսբանկը՝ առաջարկվող ծառայությունների լավագույն պայմաններով ու սակագներով, ընտրվել է որպես գործընկեր՝ համապատասխան ֆինանսական միջոցները թափանցիկ հաշվետվողականությամբ շահառուներին ժամանակին և պատշաճ կարգով տրամադրելու համար:

«Բնության համաշխարհային հիմնադրամը Կովկասը համարում է կենսաբազմազանության առումով նշանակալից կարևորություն ներկայացնող էկոտարածաշրջան, իսկ հիմնադրամի տեսլականն է՝ պահպանել Հայաստանն առողջ ու զեղեցիկ ներկա և ապագա սերունդների համար», - ընդգծել են բանկում:

Ծրագրի առաջնահերթություններն են՝ հայկական հատուկ նշանակություն ունեցող կենդանիների՝ բեզարյան այծերի, հայկական մուֆլոնների, գորշ արջերի և կովկասյան ընձառյուծների պահպանումն ու տարածաշրջանի համայնքներում առկա այլ խնդիրների լուծումները մեկ ամբողջության մեջ դիտարկելը:

«Հայբիզնեսբանկը, արժևորելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության սկզբունքները, ինչպես նաև ՀՀ մարզերում զբաղվածության մակարդակի բարձրացումը, մշտապես կարևորում է նմանատիպ նախաձեռնությունների իրականացումը և այս անգամ էլ

պատրաստականություն է հայտնել զորավիզ լինել Վայոց Ձորի մարզում բնապահպանական ծրագրի իրականացմանը՝ միաժամանակ նպաստելով տնտեսական ակտիվության բարձրացմանը», - ասված է հաղորդագրությունում:



ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է ԴՈՒԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՐԱՆՇԸ

03.03.2017



Անելիք Բանկը երկրորդ անգամ թողարկել է դուլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 6,25% տարեկան եկամտաբերությամբ:

Ինչպես հայտնել են բանկում, պարտատոմսերի շրջանառության ժամկետը 24 ամիս է, իսկ տոկոսները կվճարվեն 6-ամսյա պարբերականությամբ:

Երկրորդ թողարկման ծավալը կազմել է \$5 մլն: Ձեռքբերման համար նախատեսված նվազագույն փաթեթը բաղկացած է 10 պարտատոմսից, յուրաքանչյուրը՝ \$100 անվանական արժեքով:

«Անելիք Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ձկուն ներդրումային գործարքներ: Իսկ պարտատոմսերը ներդրումներն ապահովելու և ինֆլյացիայից պաշտպանելու հարմար ու աշխարհում տարածված գործիք են», - նշել է Անելիք Բանկի վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանը:

Հիշեցնենք, որ նախորդ տարվա դեկտեմբերին Անելիք Բանկն առաջին անգամ իր պատմության մեջ թողարկել էր անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք նշված ժամկետում ամբողջությամբ տեղաբաշխվել էին:



MOODY'S-Ը ԲԱՐՁՐԱՑՐԵԼ Է ՅՈՒՆԻԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՆԻՇՆ

10.03.2017



Moody's Investors Service միջազգային գործակալությունն այսօր վերանայել և բարձրացրել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար:

Բանկում նշել են, որ բազային վարկային գնահատականը (Baseline Credit Assessment, BCA) սահմանվել է B3, իսկ կոնտրադենտի ռիսկի գնահատականը (Long-term Counterparty Risk Assessment (CR Assessment)՝ B2(cr)/NP(cr) մակարդակի վրա: Կանխատեսումը կայուն է:

Moody's-ի կողմից վարկանիշի բարձրացումը հիմնականում պայմանավորված է վերջին շրջանում Յունիբանկի կապիտալի զգալի համալրմամբ և ակտիվների որակի բարելավմամբ: Moody's-ի գնահատմամբ՝ 2016թ. բանկի ընդհանուր նորմատիվային կապիտալը 2015թ. վերջի համեմատ աճել է մոտ 68%-ով:

2016թ. արդյունքներով՝ Յունիբանկի ակտիվները կազմել են մոտ 186,4 մլրդ դրամ, պարտավորությունները՝ 150,7 մլրդ դրամ: Բանկի ընդհանուր կապիտալը գերազանցել է 35,7 մլրդ դրամը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,

- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: